ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 դեկտեմբերի 2014թ. թիվ 428-Ա

ԱՆԺԵԼԱ ՆԻԿՈԼԱՅԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
«ԳԱՐԳԱՌԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված կարգի 71-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Գարգառի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 5 որոշումը, հաշվի առնելով Ա.Հովսեփյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Անժելա Հովսեփյանին նշանակել «Գարգառի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով 2014 թվականի դեկտեմբերի 1-ից:

2. Ա.Հովսեփյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. դեկտեմբերի 1
ք.Վանաձոր